Պրոլետարական իշխանության ամրացումը քաղաքում, և խոշոր կալվածատերական սեփականության վոչընչացումը գյուղում (բուրժուա-դեմոկրատական հեղափոխության վախճանը գյուղում), կուսակցության առաջ դրեց գյուղում բատրակ-չքավորական իշխանություն կազմակերպելու խնդիրը։ Այս խնդիրը լուծվում է չքավորական կոմիտեներ (կոմբեդներ) և կոիվ ընդդեմ կուլակի կազմակերպելով։ Այստեղ բանվոր դասակարգը և կուսակցությունը գնում են բատրակների և չքավորների հետ, ընդդեմ կուլակների չեղոքացնելով միջակին (միջակը-տատանվող տարր ե, նա դեռ յեփս չի տեսնում, թե ով կը հաղթանակի ծավալվող այս կովում)։ Քաղաքում հաղթանակած բանվոր դասակարգը հանձինս չքավորական կոմիտեների ստեղծեց գյուղում իր ամուր հենարանը։

Կուսակցության V III համագումարի բանաձեռում դրվում է միշտակների հետ դաշնակցելու խնդիրը։

### Ն. Խազմական կոմմունիզմը գյուղում։

1918-20 թվականների տնտեսական քաղաքականության հիմնական մոմենտները գյուղում կարելի ե հաշվել ա) Մասնատրումը և պարենժողկոմատի միջոցով ծրագրային («քաղցած») մատակարարումը բ) կոմմունաների և խորհրդ—տնտեսությունների կազմակերպումն գ) կոռպերացիայի վերակազմելը և նրան Պարենժողկոմատին յենթարկելը, դ) գյուղատնտեսությունը պետականորեն կանոնավորելու փորձերը։ Այս հիմնական միջոցներով վոչ միայն վճռվում է յերկրի պաշտպանման խնդիրը, այլ և փորձ ե արվում լուծել տնտեսական շինարարության խնդիրները, կուսակցության IX-րդ համագումարը տալիս է դիրեկտիվ՝ լայնացնել մասնատրումը, արդյունաբերական կենտրոնները և տրանսպորտը հում նյութով ապահովել և ստեղծել պայմաններ քաղաքի արդյունաբերությունը բարձրացնելու համար։ Կոմմունաների և խորհրդ-տնտեսությունների կազմակերպման նպատակն եր արագացնել կոլլեկտիվ տնտեսությունների նոր ձևերի շինարարությունը գյուղում։

Այս, ինչ պատերազմի պայմաններում հանդիսանում եր յերկաթյա անհրաժեշտություն (նյութական միջոցների մորթիլիզացիայն ուազմաճակատը և քաղաքների ազգաբնակչությունը ապահովելու համար) մյուս կողմից դա և միաժամանակ բոլշևիկների հերոսական ձգտումն եր՝ անմիջապես իրականացնել սոցիալիզմը։

### 3. Նեպին անցնելը գյուղում։

Նոր տնտեսական քաղաքականության անցնելը բղխում եր գյուղացու տնտեսությունը բարձրացնելու անհրաժեշտությունից, վորով կըստեղծվեր առողջ բազա քայլայված արդյունաբերությունը վերաշինելու համար։ Յեկ այդ պատճառով նեպը առաջին հերթին զիջումն եր գյուղացիությանը իբրև մանր-ապրանքարտադրողի, իբրև գնողի և վաճառողի։ Այս իմաստով նեպը նահանջ եր դեպի ազատ առևտությունը գիրքերը, վորպեսզի շահագրգուել գյուղացիությանը, ստեղծել արդյունաբերական սոցիալիստական շինարարության միակ առողջ բազան, ամրանալ և հարձակվել ընդդեմ կապիտալիզմի։ Նեպին անցնելով լուծվեց բանվոր դասակարգի և գյուղացիության վոհմարարերության կենտրոնական խնդիրը։

Քաղաքացիական կոփլսերի և Նեպի շրջանի տնտեսական քաղաքականության սիստեմերի համեմատությունը տալիս է հետեւյլ փոփխությունները՝ ա) մասնատրման և ծրագրային մատակարարման սիստեմը փոխարինվում է պարենտուրքով և ազատ առևտրով բ) յեթե առաջ գյուղացիական տնտեսությունները սոցիալիստականի վերածելու միակ հնարավոր միջոցները համարվում են միայն կոմմունաները և խորհրդային տնտեսությունները, այժմ միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների միացման հիմնական ուղին հանդիսանում է ազատ անդամագրության և իր աշխատանքներում ինքնուրույնության պահպանման սկզբունքներով կազմակերպված կոոպերացիայն։ գ) կոմբերական քաղաքականությունը, այսինքն գյուղում քաղաքացիական կոփլ զարգացնելը և կուլակների ունեցվածքը բռնագրավժան յենթարկելը փոխվում է կուլակների դեմ պայքարելու տնտեսական մետողների։ Բատրակները և չքավորները կազմակերպվում են խորհրդների և կոոպերացիայի շուրջը, նրանց ցույց ե տըրվում նյութական աջակցություն պետության կողմից և ամրացվում է չքավորության ու միջակի կազմը։

Բատրակը և չքավորը մնում են իրեն կուսակցության անսասան հենարան գյուղում։ դ) Վերջապես խորհրդների, կոոպերացիայի և գյուղի այլ մարմինների աշխատանքների վարչական ձեռքը փոխարինվում են ճկուն դեկավարությամբ և այն մարմինների աշխատանքների մեջ ներդրավվում են լայն մասսաները (խորհրդների աշխուժացումը)։

#### 4. Նեպի ծավալումը գյուղում.

1925 թվականին կուսակցությունը լուծում է գյուղացիական տնտեսության մեջ վարձու աշխատանքի և կապալի կիրառման հարցը, վարձու աշխատանքի և կապալի գոյություն ունեցող արգելումը ապրանքային տնտեսության և գերաբնակչության պայմաններում կանգնեցնում եր գյուղատնտեսության արտադրական ուժերի զարգացումը և լավ դեպքում, դժվարացնում ազատ բանվորական ուժի և չըմշակվող հողի ոգաագործումը. իսկ վատ դեպքում առաջացնում եր անլեզալ վարձու աշխատանք և կապալ, փորից առաջին հերթին տուժում եր չքավորը, վարձու աշխատանքի և կապալի թույլատրումը ուղղում եր գյուղում փաստորեն ստեղծված հարաբերությունները՝ ա) գյուղատնտեսության արտադրողա-

կանության գարգացման և բ) չքավորության ու բատրակների շահների ապահովման ուղղությամբ։

1926 թվին Բ. Գ. Ֆ. կողմից հարյուր հազար անտեսությունների ուսումնասիրությունը տալիս է կապալային հարաբերությունների զարգացման հետեւյալ պատկերը՝

ա) 1926 թվին հողերի կապալով տալը միջին թվով ավելացել է 70—80% (համեմատ 1925 թվի հետ)։

բ) Կապալային ֆոնդի ընդհանուր չափը հավասար է նախապատերազմյանի  $\frac{1}{3}$  մասին։

գ) Հողի գլխավոր մասը կապալով վերցնում են միջակ ցանքատերերը։

դ) Կուլակային տնտեսություններին ընկնում է կապալային ֆոնդ ավել չքավոր անտեսություններին քիչ, համեմատած կապալառուների ընդհանուր մասսայում, նրանց ունեցած մասի հետ կապալային ֆոնդից միջակներին ընկնում է կապալառուների ընդհանուր մասսայում նրանց ունեցած տոկոսին համեմատ։

ե) Կատարվում է կապիտալիստական կապալի կենտրոնացումն հատկապես արտադրող շրջաններում։

Սպառող շրջան:	Արտադրող շրջան:
Մեծացանքսային կապալառուների $\%$ 1925 թ. 1926 թ.	1925 թ. 1926 թ.
Եռորդ կապալառուների համեմատ:	2,6 4,7 15,9 18,7

կապալային ֆոնդերի  $\%$  7,0 9,8 39,6 48,7

Տես Большевик за 1926 № статья Яковлева.

Ըստ. Մոլոտովի թեզիսները կուսակցության XV համագումարում տալիս են խիստ դասակարգային դիրեկտիվ գյուղում կուլակի դեմ կովելու համար։

Ոգտվելով տնտեսական մարմինների ամբողջ ուժով և առաջի պես հենվելով գյուղացիության չքավորամիջակային մասսայի վրա, զարգացնել իր հետագայ հարձակումը կուլակության դեմ և ձեռնարկել գյուղում կապիտալիզմի զարգացումը սահմանափակող մի շարք նոր միջոցների։

Գյուղի աշխատանքների վերաբերյալ 15 համագումարի մինչ համագումարային թեզիսները կապիտալիստական կապալի զարգացումը սահմանափակելու համար առաջարկում են՝

ա) Հետզետե կրծատել կապալով տրվող հողի տարածությունը

այն զջաններում, վորտեղ կապալը զարկ ե տալիս կապիտալիստական հարաբերությունների ուժեղանալուն:

բ) Սահմանափակել կապալի ժամկետը մեկցանքսաշրջանառությամբ և 6 տարուց ոչ ավել:

գ) Այն հողերը, վորոնք 6 տարով կապալով տալու ժամկետից չեն մշակվում տալ հող-ընկերություններին:

դ) Վճռականորեն պայքարել յենթակապալի (սубառեկա) բոլոր տեսակների դեմ:

ե) Պետական հողամասերը կապալով տալ չքավորամիջակային խավերին (ե ոչ թե ունենալ) 6 տարուց ոչ ավել ժամանակով:

Գյուղատնտեսության մեջ գործադրովող վարձու աշխատանքի վերաբերյալ թեզիսները ընդգծում են Խորհուրդների և Հողանտառ միության պայքարի անհրաժեշտությունը գյուղատնտեսական բանվորների ստրկացնող պայմանների և սոցապահովագրման սկզբանքի խախտման դեմ:

### 5 Խորհրդային գյուղի ըերտավորման ընթացքը.

Աղատ առեսուը առաջացնում ե գյուղացիության շերտավորումն՝ գյուղացիության մի մասը—վերին շերտը կուտակում և միջոցներ ի հաշիվ գյուղի չքավորական մասի թուլացման: Հողի մասնավոր սեփականությունը, չքավորության անսահմանափակ շահագործումը և ծանր հարկերը արագ թափով շերտավորում ելին ցարական Ռուսաստանի գյուղը: Գյուղում տնտեսական և քաղաքական կենտրոնական ուժը կուլակն եր:

Կուլակների գոչնչացման շրջանում (1918—20 թ.) գյուղը հահավասարվեց՝ միջակացավ: Հողի ազգայնացումը, կոռպերատիվ և հարկային քաղաքականությունը, չքավորներին ոգնելը, նեպի պայմաններում կանգնեցնում են գյուղացիության շերտավորման պրոցեսը:

Հետեւյալ աղյուսակը բնորոշում ե Խ. Ա. Ֆ. Ա. Բ.-ի գյուղացիական տնտեսությունների խմբավորութիւնը (տոկոսներով):

Հստ ցանքի:

	1925 թ.	1926 թ.
Առանց ցանքսի	4,7	4,5
Մինչև 2 դեսյատին	34,3	22,1
2-ից 6 դեսյատին	49,6	50,9

6-ից 10 դեսյատին	8,7	9,4
10 դեսյատինից ավել	2,7	2,3
Բայց անասունների		
	1925 թ.	1926 թ.
Առանց բանվոր. անասունի	30,6	30,4
Մեկ դլուխ անասուն	52,2	50,2
Երկու » »	12,4	13,8
Յերեք » »	2,9	3,5
Չորս » »	1,8	2,1

(Статистический справочник С. С. С. Р. за 1927 г. изд. Ц. С. У.)

Գյուղատնտեսության հիմնական գեմքը մնում է միջակը: Բացի գյուղական գյուղից, յեթե նախապատերազմական գյուղի շերտավորումը կատարվում եր ի հաշիվ միջակների քչացման, ապա հիմա միջակը կայուն ե, քչանում ե չքավորը, վորի մեծմասը միջականում ե, իսկ մի մասը պրոլետարականանում:

### 6. ՀողոգՏագործությունը:

Գյուղացիական տնտեսության տնտեսական հաջող վերելքը հողոգտագործման խնդիրներւմ պահանջում ե կայուն որենսդրություն, վորով կապահովվի մասը աշխատանքային տնտեսության գերագույն ինքնուրույնությունը:

Հողոգտագործման և հողաշինարարության հիմունքները սահմանվում են հանրապետական հողային կողեքսներով:

ա) Հողը գտնվում ե պետության ձեռքին (ազգայնացրւմն), պետությունը տալիս ե հողը ոգտագործելու այն գյուղացիությանը, վորոնք մշակում են հողը իրենց աշխատանքով, կամ գործադրելով նաև լրացուցիչ վարձու աշխատանքով: Հողի վաճառումը, կամ նվիրելը արգելվում ե:

բ) Թուլլատրվում ե հողի աշխատանքային կապալ: Կապալով կարող ե հող վերցնել միայն նա ով մշակելու ե իր, կամ լրացուցիչ վարձու աշխատանքով: Կապալառուն վճարում ե հողից հաշվող բոլոր առլրքերը:

Հողը կարելի ե տալ կապալով՝ ընտանիքի անդամի հիվանդության և մահվան դեպքերում, կամ ընտրովի պաշտոն ստանալիս (յեթե դա անհնարին ե դարձնում տնտեսության մեջ մասնակցելը), կարմիր բանակի շարքերը գորակոչվելիս, աշխատանքի համար գյու-

վեց գնալիս, կամ վերագաղթի դեպքերում: Կապալի ժամկետը մեջերկու ցանքսաշրջանառության 3—6 տարի: Հողը կապալով տալիս կնքում ե պայմանագիր, վորը պարտադիր կարգով գրանցվում է գյուղխորհրդում:

Լրացուցիչ վարձու աշխատանքի գործազրումը թույլ ե տրվուայն դեպքում, յերբ վարձողի ընտանիքի բոլոր անդամները աշխատում են: Վարձողի և վարձվողի մեջ կնքում ե պայմանագիր, վորը պարտադիր կարգով գրանցվում ե Հողանտառմիությունում: Պայմանագրում գրվում են աշխատանքի և վարձատրության պայմանները: Սեղոնային յերեք բանվորներից շատ վարձելիս նրանց սոցապահովագրումը պարագիր ե: Գյուղատնտեսական բանվորների աշխատանքի պաշտպանությունը նախատեսնված ե սոցիալական հրահանգներում:

Դ) Գյուղացիական տնտեսությանը ավելի մեծ ինքնուրույնություն տալու համար, թույլատրվում ե հողոգագործության ձեփի ազատ ընտրություն (համայնական, հողամասային, ընկերական):

Ե) Գյուղ տնտեսության կայունության համար սահմանվում են վերաբաժնման ամուր ժամկետներ (երեք ցանքսաշրջանառություն), Համայնքից դուրս գնալիս անհրաժեշտ ե ծուխերի  $\frac{1}{5}$  մասի համաձայնությունը:

Միջներտերի և հեռու ընկած հողերը կանոնավորելու համար կատարվում են հողաշինարարական աշխատանքներ: Գյուղացիների ինդիրները հողաշինարարության ասպարիզում գերազանցում են պետութեան հնարավորություններին: Հողաշինարարական գլխավոր աշխատանքները կը վերջացվեն մոտակա տաս տարում:

15 համագումարի թեղիմները գյուղի աշխատանքների մասին շեշտում են համամիութենական մասշտաբով հողոգտագործման և հողաշինարարության ընդհանուր սկզբունքներ վորոշելու նպատակահարմարությունը:

Գյուղատնտեսության համար մեծ նշանակություն ունի անտառներից ոգտվելը: Անտառային կողեքսով անտառները բաժանվում են պետական և տեղական նշանակություն ունեցող անտառների: Տեղական նշանակություն ունեցող անտառները տրված են գյուղացիությանը ոգտագործելու համար պետության հսկողության տակ:

## 7. Գյուղատնտեսության ինդուստրիալիզացիան:

Կուսակցության քաղաքականությունը գյուղում խնդիր ե դնում շաղկապել արդյունաբերության զարգացման շահերը գյուղատնտեսության հետ: Գյուղացիությունը շահագրգուված ե ինդուստրիալիզացիայի մեջ, առաջին հերթին, իրեն գյուղատնտեսության անհամաշեշտ մեքենաներ սպառող և յերկրորդ իրեն արդյունաբերության համար հում նյութ արտադրող: Պետությունը տալիս ե գյուղին գյուղատնտեսական մեքենաներ ինքնարժեքից ցած գներով: Այսպիսի քաղաքականությունը խորթ ե կապիտալիզմին: 1926—27 թ. գյուղին տրվել են նախապատերազմյան ժամանակից շատ մեքենաներ (1913 թվին—104 միլ. բուլու, 1926—27 թվին—112 միլ. բուլ.): Պակասող մեքենաների մի մասը ներմուծվում ե արտասահմանից, սակայն Ստալինգրադի, Ռոստովի, (Դոնի վրայի) կառուցմանից, սակայն Ստալինգրադի, Ռոստովի, կառուցմանից նոր գործարանները կը շատացնեն գյուղատնտեսական մեքենաների մեր արտադրությունը:

Գյուղատնտեսության վերյելքի ընադավառում հետեւյալ ինդիրը կազմում ե գյուղատնտեսական մթերքների վերամշակումը գյուղում: Պանրի յուղի, ոսլայի և ուրիշ նման գործարանների նպատակն ե բարձրացնել գյուղատնտեսության յեկամուտը: Բացի գրանից գյուղատնտեսության ինդուստրիալիզացիան պետք ե հեղտնետել վերբնակալչությունը: Իր ֆինանսական քաղաքունչացնի հողային գերբնակչությունը: Իր վերբնականության միջոցով, պետությունը գրավում ե գյուղացիությանը ինդուստրիալիզացիայի ծրագիրը իրականացնելու գործի մեջ:

## 8. Գների բաղախականությունը:

Նեպի պայմաններում քաղաքի և գյուղի տնտեսական կապի միակ ձեռ հանդիսանում ե առևտուրը: 1923 թվի «մկրատը» սպառնում եր բանվոր գասակարգի և գյուղացիության դաշնաբին: 1826 թվին արդյունաբերական ապրանքների գների բարձրացումը նույնպիսի վտանգ եր սպառնում: Մյուս կողմից տեխնիքական կուլտուրաների գների սխալ քաղաքականությունը 1926 թվին կրճատեց այդ կուլտուրաների մշակույթը  $6\frac{1}{2}$ -ով: Սա քայլայում ե արդյունաբերության հում նյութի բազան և մյուս կողմից եքստենսիֆիկացիայի և յենթարկում գյուղատնտեսությունը (հացահատիկների մշակութիւն ավելանալը), վորը կարող ե ուժեղացնել հողային գերա-

բնակչությունը։ Այդ պատճառով արդյունաբերական ապրանքների մեծածախս և մանրածախս գների իջեցումը և այդ իջեցումը մինչ զյուղ հասցնելը, հացի և հում նյութերի կուտուրաների գների այնպիսի ձիշտ քաղաքականությունը, վորը զարկ կըտա զյուղա տնտեսության արտադրողականության բարձրացմանը, հանդիսա նում և բոլոր տնտեսական խնդիրների կենտրոնական առանցքը։

9. Կուսակցութեան վարուումը գյուղի աշխատանիների մասին։

Գյուղի աշխատանքների վերաբերյալ կուսակցության հիմնա կան վորոշումները ամփոփված են XIV կուսակոնֆերանսի, XIV կուսակամագումարի, և XV կուսակամագումարի նախահամագումա բային նյութերում (ընկ. Մոլոտիվի թեղիները)։

XIV կուսակոնֆերանսը իր ուշադրությունն է դարձնում կոո պերացիային, վորը հանդիսանում է գյուղի միջակային մասի հիմնական ուղին դեպի սոցիալիզմ։ Գյուղացիության կոոպերացումը դնում է գյուղի կուտակումը հասարակական հուսի մեջ, ոժանդա դակում է պետությանը գյուղ-տնտեսությունները ղեկավարելու և նրանց, իրեն մանր ապրանքարտադրողների, շահերը պետարդյու նաբերի հետ շաղկապելու գործում։

1925 թվին կենտրոնական կոմիտեի նոյեմբերյան պլենումը ընդունեց հետևյալ վորոշումները քչավորության մեջ աշխատելու մասին—ա) Համախմբել չքավորությունը Խորհրդների շուրջը թ) ուշ նել նրան կոոպերացիայում անդամագրվելիս, գ) ավելի մեծ ուշա դրություն դարձնել կոլեկտիվ տնտեսություններին, վորտեղ հա մախմբել զիսավորապես բատրակներին և չքավորներին, դ) աջակ ցել փոկերի և Հողանտառմիության աշխատանքներին, ե) պաշտ պանել չքավորների շահերը և կյանքում կիրառել գոյություն ունե ցող արտօնությունները գ) ամրացնել գյուղերի կուսական ակադ կազմակերպությունները։

Աշխատանքը չքավորության հետ Անդրկովկասի գյուղում ունի հատուկ նշանակություն, քանի որ Անդրկովկասի չքավորության պահանջմանը ավելի բարձր է քան Ռուսաստանում։

Գյուղ- Տնտեսությունների խմբավորումը Ա. Ս. Ֆ. Հ. Հերում։

Բատ ցանքսի

Առանց ցանքսի կամ մինչև 0,9 դեսիատին  
Յանքսով

10,7 տոկ.

0,1 մինչև 1 դես. ցանքսով	37,5	»
1-ից » 2 » »	28,3	»
2-ից » 6 » »	21,6	»
6-ից » 10 » »	1,5	»
10 դես. ավել	0,4	»
Բատ բանվորական անասունների		
Առանց անասունի	39,0	տոկ.
Մինչև 1 բան. անասուն ունեցողներ	36,9	»
1-ից մինչև 2 » »	15,3	»
2-ից » 3 » »	5,5	»
3-ից և ավել անասուն	3,3	»

(Հար. Խօ. Յակ. և լիբրաք 1927 թ. էտր. 138—145).

Կուսակցությունը իր քաղաքականությամբ ոգնում է չքավորությանը (չքավորների 35 տոկ. տուրքից ազատելը, չքավորության վարկավորման ֆոնդ ստեղծելը, կոլեկտիվներին ոգնելը, չքավորության կոոպերացումը) և մասսայական միջոցներով ոժանդակում է տնտեսության բարձրացմանը (խոտաբուծության զարգացումը, սերմացուների լավացումը, արտասահմանից լավ անասուններ բերելը, սերմազարիչ կայանները, ազրողնություն, կոոպերացիային ոժանդակելը և այլն)։

10. Կոլեկտիվ ձեվերը գյուղատնտեսության մեջ։

Յերբ մենք խոսում ենք չքավորությանը նյութական ոգնություն ցոյց տալու մասին, սա չի նշանակում, վոր կուսակցությունը ցանկանում է բոլոր չքավորներին դարձնել միջակներ։ Անհատական չքավոր տնտեսություններին նյութական ոգնություն տալը ժամանակավոր մի միջոց է։ Գյուղի չքավորության հիմնական տնտեսական ուղղությունը՝ նրանց հետդիետե կոլեկտիվ տնտեսությունների մեջ համախմբելն է։ Սակայն այս հիմնական ուղղությունը, նախ պահանջում է պետական կապիտալ և ապա նայել, վորպեսդի չքավորները գործնականում հրաժարվեն մանր սերմականատիրական յերազանքներից—թե անհատական ուժերով կառելի է գուրս գալ չքավորությունից։ Իսկ առայժմ կուսակցությունը ոգնում է առանձին չքավոր տնտեսություններին, ի հարկե, վոչ ի հաշիվ գյուղատնտեսության կոլեկտիվ ձերի զարգացման։

Ուղամական կոմմունիզմի ընդանում սկսված կոլեկտիվ տնտե-

սությունների աճումը Նեպի շրջանում դադարում եւ կոլեկտիվ անտեսությունները բաժանվում են առանձին անտեսությունների: Միայն Ռուկայնայում կոլեկտիվ անտեսությունները շարունակում են աճել: 1925 թվի կեսերին կոլտնտեսությունների թիվը հասնում եր 20.000: Համեմատած ամբողջ մասնավոր գյուղացիական անտեսությունների հետ, կոլտնտեսությունները ըստ նշնչի թիվի կազմում են 0,7 տոկ. ըստ հողի տարածության—0,8 տոկ. ըստ բանվորական անտեսունների—0,5 տոկոս: Գյուղատնտեսության այս նոր ձևը թվականորեն խեղդվում եւ անհատական միլիոնավոր գյուղացիական ծովական մեջ: Սակայն չնայած դրան, տարեց-տարի կոլտնտեսությունները դառնում են խոշոր կոլտնտեսությունների առվելությունը ընդդող ցուցանիշ:

### 11. Գյուղատնտեսության նիմیական ցուցանիշները.

Գյուղատնտեսական մթերքների արտադրության ներկա աստիճանը կարելի եւ ցուցադրել հետևյալ թվերով:

Յանքսի տարածությունը	1913 թ.	100 <sup>0</sup> / <sub>0</sub>	1926—27 թ.	95,1 <sup>0</sup> / <sub>0</sub>
Չիերի քանակը	»	100 <sup>0</sup> / <sub>0</sub>	»	82,0 <sup>0</sup> / <sub>0</sub>
Խոշոր յեղջուրավոր անա-				
սունների քանակը	»	100 <sup>0</sup> / <sub>0</sub>	»	106,3 <sup>0</sup> / <sub>0</sub>
Կ. կ. և կ. Վ. Հ. ոգոսասոյան միացյիալ պլենումը ընեղծում				
և 1926—27 թվականներին գյուղատնտեսության հետևալ հատկանիւնները՝				

ա) Տեխնիքական բույսերի ցանքսի տարածության մեծացումը բ) հացամթերման կայուն և ծախքի ցած գները ամբողջ տարվա ընթացքում: գ) Հացահատիկների ցանքսերի գարզացումը: դ) Կուսակցության դիրեկտիվի խեղաթյուրումը գյուղատնտեսական վարեկի և գրուղ-կոռոպերացիալի աշխատանքներում, վորը առանձին դեպքում արտահայտվում եւ գյուղի ունեող-կուլակային մասի կողմից անբնական մեծ վարկեր ստանալու մեջ, կուլակների կեղծ-ընկերությունների միջոցով գյուղատնտեսական մեքենաներ ստանալը և այլն:

իբրև հերթական խնդիրներ պլենումը առաջադրում եւ՝  
ա) Անբերիության դեպքերի համար ստեղծել հացի և կերի պաշար, ավելացնել պետության սերմի ֆոնդը, յերաշտային շրջանները ապահովել յերաշտակայուն սերմերով, խրախուսել յերաշտային շրջաններից դուրս ցանքող տարածությունների մեծացումը և այլն:

բ) Գյուղի կուլակային շերտերի գարզացման պայմաններում կուսակցական և Խորհրդային մարմինները պետք եւ համառորեն անցկացնեն կուսակցության դիրեկտիվը՝ ամենալայն աշակեցություն ցոյց տալ չքավորներին և պաշտպանել նրանց շահերը:

գ) պաշտպանել հացահատիկների և տեխնիկական կուլտուրաների անցյալ տարվա գների չափը, ըստ վորում ավելի մեծ համաձայնեցումն ստեղծել առանձին կուլտուրաների գների և զանազան արտադրողական շրջանների մեջ:

### 12. Գյուղատնտեսությունը Ա. Ա. Ֆ. Խ.—ում:

Ա. Ա. Ֆ. Խ. Հանրապետության գյուղատնտեսության վերակառուցման պրոցեսը տալիս եւ հետևյալ պատկերը:

ա). Յանքսերի տարածությունը (հազար գետամետի):

	1909—13 թ.	1923—24 թ.	1924—25 թ.
Հացահատիկներ	1784,3	1544,9	1586,2
Տեխնիք. բույսեր և հում նյութ	141,5	36,0	118,5
Այլ գաշտաբույսեր	19,8	18,8	18,8
Այգիներ և խաղող	129,0	101,2	100,4
Բոստաններ	19,6	19,6	20,0
Հնդամենը	2094,2	1720,5	1843,9

1926 թվին ցանքսերի տարածությունը հավասարվում է 1947,2 հազար գետամետի:

բ) Գյուղատնտեսության ամբողջ արտադրությունը (հազար բուրմիներով):

	1924—25 թ.	1925—26 թ.	1926—27 թ.
Բուսաբանություն	142.487,9	157.032,2	177.417,8
Անասնաբուծություն	54.172	58.186,8	60.142,8
Անտառաբուծություն	2.683	3.665,8	4.250
Հնդամենը	198.349	218.884,8	241.810,6

(«Заря Востока» от 12 Октября 1927 г. статья Нерсесова).

գ) Անասնաբուծության դարպացումը (հազար գլուխներով և սոկոսներով):

	1924 թ.	1925 թ.	1926. թ.
Չիեր	250,9—2,7 <sup>0</sup> / <sub>0</sub>	264,9—2,7 <sup>0</sup> / <sub>0</sub>	289,3—2,8 <sup>0</sup> / <sub>0</sub>

գարձյալ չի կարողանա բարձրացնել իր տնտեսությունը, մասամբ կը գնա քաղաքներ իրեւ գործարանի բանվորներ, իսկ մեծ մասամբ կը կազմակերպի կողեկտիվ տնտեսությունների մեջ: Կուլակային տնտեսությունը իրեւ տնտեսապես ուժեղ տնտեսություն գեռ երկար ժամանակ կը մնա վորպես անհատական տնտեսություն: Զի ժիւտվում նաև կուլակային անտեսությունների փորձերը կազմակերպի «վայրի» կոոպերատիվների մեջ, վորը կարող է ուժեղացնել նրանց պայքարը կոոպերացման ենթարկված միջակի և կուլեկտիվացիայի ենթարկված չքավորի դեմ: Կուլակային տնտեսությունների աճումը կը սահմանափակվի պետության հետևողակարուեն գարգացող հարձակումով ընդդեմ կուլակի: Հարձակման միջոցներն են՝ զյուղը ավելի լայն ունեցվացքային պրոցեսսիվ տուրքով տուրքագրելը, վորի նպատակն է տուրքագրել զյուղացիության ամենաունեցող խավերի մեծացող յեկամուտը (տարբերական ռենտայի տուրքագրումը), կուլակի չեղոքացումը կոոպերատիվ ստորին ցանցից, պայքար կուլակային կեղծ կոոպերատիվների դեմ, կապիտալիստական կապալի սահմանափակումը, հոմանքից դուրս գալու և խուտորներ կազմակերպելու սահմանափակումը, կուլակների չեղոքացումը Խորհրդներից:

#### 14. Բանվոր դասակարգի յեվ գյուղացիության մասնակի հակասությունները:

Ի ամփոփումն անհրաժեշտ է կանգ առնել նաև բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ գյուղություն ունեցող մասնակի հակասությունների վրա: Գյուղացիությունը իր հոծ զանգվածում շահագրգության մեր պետության ամրացման խնդրում, վորովհետեւ կապիտալիստական զարգացման ուղին զյուղի համար նշանակում է մեծամասնության չքավորացումն և մի բուռն կուլակների հարստացումն: Այսեղից բղխում է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը: Սակայն մենք ունենք նայել բանվոր դասակարգի և գյուղացիության շահերի հակասությունն եր լնթացիկ հարցերի շուրջ՝ ա) հակասություն պրոլետարիատի (իրեւ ամբողջություն) և գյուղացիության մեջ արդյունաբերական ապրանքերի և գյուղատնտեսական մթերքների սահմանային գների վորոշման, հարկային գործի կանոնավորման և այլ գծերով:

բ) Հակասություն պրոլետարիատի և կուլակության մեջ գյուղա-

#### Խոշոր եղջ.

անասուններ	2603,7—28,3%	2777,3—28,3%	2918,3—37,9%
Գոմեցներ	579,9—6,3	592,8—6	605,4—5,8
Վոչխարներ	4699,7—51,1	5021,1—51,2	5369,9—51,4
Այծեր	621,2—6,8	676—6,9	744,3—7,1
Խոզեր	435,4—4,8	479,3—4,9	527,6—5

դ) Բատ առանձին ճյուղերի գյուղատնտեսությունը տալիս է հետևալ պատկերը՝

	1913 թ.	14 թ.	23 թ.	24 թ.	25 թ.	26 թ.
Հավաքված ե. բամբակ						
(հազար փթերով)	—	2167	247	1156	1397	1136
Հավաքված ե. ծխախոտ						
(հազար փթերով)	589	—	—	324	575	768
Հավաքված ե. թեյ (հազար փթերով)	—	566	819	878	799	842
Հավաքված ե. հում շերամ						
(հազար փթերով)	—	238	162	227	243	269

(Նар. Խօ. Զակ. ա ցիֆրա ազդ. Ա. Ս. Ս. 1927 թ.)

ՅԵԼՆԵԼՈՎ ԱՆԴՐԿՈՎԼԿԱՍԻ Գյուղատնտեսության առանձնահատկություններից իրեւ հիմնական հերթական խնդիրներ պետք է ընդունակ ամելիորատիվ աշխատանքներ. բ) ճիշտ քաղաքականություն տեխնիկական կուլտուրաների գների ասպարիզում. գ) հացի մեծաբարձություն և հացի գնի իջեցումը իրեւ միջոց գյուղացիության տեխնիկական կուլտուրաների արտադրությամբ շահագրգուելու համար (բամբակի խաղողի, շերամի, ծխախոտի և թեյի արտադրության զարգացում):

13. Գյուղի տնտեսական հիմնական պրոցեսսների ընդհանուր հեռանկարները.

Պրոլետարիատի զիկուտուրայի պայմաններում գյուղի տնտեսական հիմնական պրոցեսսները ստանում են հետեւյալ հեռանկարները՝

Միջակների գլխավոր զանգվածը հաշված նրանց հետ նաև տնտեսական վորոշ լավ դրության հասած չքավորներին, արտադրական գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի միջոցով հետզհետեւ կը գնա համայնացման ուղիով: Զքափորության այն մասը, վորը մոտապատճում չնայած Խորհրդային Խշանության աջակցության

տնտեսական մթերքների չարաշահ գների վոչնչացման և տուրքի ծանրությունը կուլակների վրա գնելու գծերով:

գ) Հակասություններ մի կողմից բատրակների ու չքափորների և մյուս կողմից կուլակության մեջ:

Այսաեղից պայքար այդ դաշինքում, պայքար, վորը ծածկվում է շահերի ընդհանրությամբ և վորը պետք է վերջանա ապագայում, յերբ բանվորները և գյուղացիները կըդադարեն դասակարգեր լինելուց: Մենք ունենք միջոցներ և ձանապարհներ այդ հակասությունների վերացման համար բանվորների և գյուղացիների դաշինքի պահպանման և ամրացման շրջանակներում (Ստալին «հարցեր և պատասխաններ»):

### 15. Աշխատանիքը գյուղում յեկ ԽՎ կուս-համաժումարը:

Ընկ. Մոլոտովի թեզիաները ԽՎ կուս-համագումարի նախորեցին գյուղի աշխատանքների մասին տալիս են խիստ դասակարգացին դիրեկտիվ կուլակի դեմ հարցակման դիմելու մասին: Ընդդեռով ցանքսերի տարածության մեծացումը ի հաշիվ գյուղացիության հիմնական զանգվածի, բանվոր դասավարգի և միջակ գյուղացու դաշինքի ամրացումը և վճռական բեկումն կուլակի չեղոքացման գործում, կուսակցության առաջ գրվում ե ինդիք՝ «Ոգտվելով տնտեսական ամբողջ ույժով և առաջվա պես հենվելով գյուղացիության չքափորմիջակային մասսայի վրա, զարգացնել իր հետագա հարձակումը կուլակության դեմ և ձեռնարկել գյուղում կապիտալիզմի զարգացումը սահմանափակող մի շարք նոր միջոցներ» (Համ. Կ. (բ) Կ. Կ. Կ. թեզիաներից):

Նյութական ոգնություն կյուղի չքափորական շերտերին և աջակցություն միջակներին, կուլակների շահագործողական ձգումների մաքսիմալ սահմանափակման հետ միասին, ամեն տեսակի աջակցություն չքափորամիջակային կոռպերացիայի և տնտեսության կոլեկտիվ ձևերի զարգացման, այսպես են դնում կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը մոտակա տարիների ինդիքը «բազմամիլիոն գյուղացիական զանգվածի հետ դեպի սոցիալիզմ շարժվելու» գործում:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ծանր արդյունաբերության նեանակությունը սոցիալիստական շինարարության նաև:

«Մենք գիտենք, վոր թուսաստանի փրկության համար պետք է վոչ միայն գյուղատնտեսության լավ բերք, սա դեռ քիչ ե, վոչ միայն գյուղացիությանը սպասման առարկաներ մատակարարող թեթև արդյունաբերության լավ գրությունը, սա դարձյալ քիչ ե, մեզ անհրաժեշտ ե նաև ծանր արդյունաբերություն: Կպահանջվի մի քանի տարիների աշխատանք, նրան լավ գրության հասցնելու համար:

Ծանր արդյունաբերությունը կարիք ունի պետական վարկագործան: Յեթե մեզ մոտ այդ վարկագործումը չգտնվի, ապա մենք իբրև բարեկիրթ պետություն, յես դեռ չեմ ասում, իբրև սոցիալիստական—կիորչենք: Յեկ այդ ուղղությամբ մենք արել ենք վը-ճռական քայլ: Այսինքն մենք կուտակել ենք անհրաժեշտ միջոցներ, ծանր արդյունաբերությունը վոտքի կանգնեցնելու համար: Մկրե համար, այս տարի մենք կուտակել ենք դեռ ևս շատ քիչ, 20.000.000 վոսկի բուբլուց քիչ ավել: Ամենայն դեպս այդ գումարը կա և մենք նրան կողագործենք վոչ ուրիշ կերպ, քան մեր ծանր արդյունաբերությունը բարձրացնելու համար»:

Այսպիսի զնահատական ե տալիս կենինը կոմիստերնի շրջորդ կոնցըսում ծանր արդյունաբերության նշանակությանը, ընդդեռով առաջին, դեռ ևս շատ աղոտ նվաճումները (սակայն նվաճումներ) և արդյունաբերության միջոցների կուտակումը:

1926-27 թ. արդյունաբերության մեջ գրված գումարը 50 անգամ շատ ե քան 1923 թվինը: Սա ցույց ե տալիս, վոր անցյալ շրջանում մենք տնտեսապես կազուրվել ենք և արդյունաբերության զարգացման խնդիրներին ընդհանրապես, ու ծանր արդյունաբերության լայնացմանը մասնավորապես, կուսակցությունը կենտրոնական նշանակություն ե տալիս:

Խորհրդային Միության ինդուստրալիզացիայն, բացի ընդհա-

նուր խնդրից՝ այն ե տնտեսության համար տեխնիկական բազա ստեղծելը, առանց վորի անհնարին ե արտադրական ուժերի զարգացումը և սոցիալիստական շինարարությունը, լուծում ե նաև (միջազգային կապիտալիստական շրջափակման պայմաններում) գեռ ևս ազգար-արդյունաբերական Խորհրդային Միության տնտեսապես անկախ դառնալու հնարավորության խնդիրը, շրջապատող արդյունաբերական կապիտալիստական Արևմուտքից:

Վորքան շուտ մենք կհամնենք կապիտալիստական աշխարհին արդյունաբերության բնագավառում, այնքան արագ կը ըստ մեր կախումը համաշխարհային տնտեսությունից ներմուծման և արտահանման գծով, այնքան շուտ մենք ցույց կտանք Արևմուտքի բանվոր դասակարգին և Արևելքի ճնշված ժողովուրդներին նոր կարգերի առավելությունը. Այդ պատճառով ինդուստրալիզացիայի թափի խնդիրը կազմում է սոցիալիզմի արմատական հարցը:

«Անհրաժեշտ ե ձգտել նրան, վորպեսզի համեմատաբար պատմական ամենակարծ ժամանակում, հասնել, իսկ ապա և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրների ինդուստրիալ զարգացման աստիճանից»:

(XV կուս-կոնֆերանսի բանաձեռից)

2. Պատմական տեղեկություններ Ռուսաստանի արդյունաբերության զարգացման մասին:

Արդյունաբերության բնագավառում կուսակցության քաղաքականության հետ կապված բոլոր հարցերի գումարը պահանջում է թեկուզ և համառոտ գնահատական նախապատերազմյան Ռուսաստանի արդյունաբերության զարգացման մասին, և արդյունաբերության պատկերը իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմի և նեպի շրջանում:

Միջին հաշվով Ռուսաստանի արդյունաբերությունը 1871—93 թվականներին տալիս եր 3,8% մեծացում: Հետագա շրջանում (1893—1913 թվականներին) արդյունաբերության զարգացման թափը մեծանում է, տարեկան միջին մեծացումը կազմում է 6,1%: Առանձնապես ուժեղ վերյելք ապրում է արդյունաբերությունը 1909—13 թվ. շրջանում:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս արդյունաբերության տուանձին ճյուղերի աճումը 1908 թվից մինչև 1918 թիվը (միլիոն մթերով):

	1908 թ.	1913 թ.
Չուգուն	171 միլ. փութ	282 միլ. փութ.
Ցերկաթ	177,4 » »	317 » »
Ածուխ	1846 » »	2723 » »
Բամբակի գործադր	19 » »	22,7 » »
Բամբակ	21,2 » »	23,9 » »
Շաքար	60,7 » »	84,6 » »

Յերկաթուղու բեռնաշրջանառությունը 5247 միլ. փթից մեծացել եր 7981 միլ. փութ, բանկերի սեփական կապիտալը 1909 թվի 1792 միլ. բուրլուց մեծացել եր մինչև 3438 միլ. բուրլու 1912 թվին:

Արդյունաբերական աճման այսպիսի արագ թափը բացատրվում ե ա) համաշխարհային շուկայի բարենպաստ կոնյունկտուրայով. բ) Ռուսաստանի հացի լավ բերքերով և գ) Ստոլիպյան բարեփոխությունների հետեւանքով ռուսական գյուղում առաջացած սոցիալ-տնտեսական յերևույթներով:

Ստոլիպինի բուրժուա-կալվածատիրական բարեփոխությունը սկսում է արագ թափով շերտավորել ոռւսական գյուղը և կուտակել միավետության ապագա հենարան կուլակային վերնաշերտի ձեռքը մեծ միջոցներ: Սրան նպաստում է նաև գյուղատնտեսական մթերքների արտահանման աճումը:

Գյուղին կրկնակոշիկներ մատակարարող Ռետինի արդյունաբերությունը իր արտադրությունը 1900 թվի 20 միլ. բուրլուց 1913 թվին հասցնում է մինչև 121 միլ. բուրլու:

Գյուղը առաջադրում է գյուղատնտեսական գործիքների պահանջ:

1905 թվին գյուղ-տնտ. մեքենաներ ծախված ելին 39 միլ. բուրլու, 1908 թվին—60 միլ. լ., 1910—86 միլ. բուրլ., 1911 թ.—119 միլ. բուրլ.: Խնայողական գրամարկներում դրվող գումարներում աճում է գյուղացիության խնայողությունների 0/0:

1904 թվին խնայող գրամ. կապիտալը հավասար եր—1.002 միլ. բուրլ., 1906 թվին—1.055 միլ. բուրլ., 1908 թվին—1.403 միլ. բուրլ., 1910 թվ.—1.551 միլ. բուրլ., 1911 թվ.—1.802 միլ. բուրլի, ըստ վորում գյուղացիության խնայողությունների 0/0-ը 1903 թվին հավասար եր 22-ի, իսկ 1911 թվին—30,40/0: Սրան պետք է ավելացնել նաև ծղնույթ կտուրներից յերկաթյա կտուրնե-

րին և ցեխե պատերից կղմինդրին անցնելը, վորը ավելացրեց թիթեղի և կղմինդրի պահանջը:

Գյուղացիության վերնախավի մեծացող պահանջը իր «ժողովրդական» կնիքն եւ գնում արդյունաբերության վրա՝ ավելի եժան ապրանքները դուրս են մղում թանկ ապրանքներին:

Այդպիսով նախապատերազմյան արդյունաբերության զարգացումը սերտորեն կապվում է ներքին, գլխավորապես գյուղացիական շուկայի լայնացման հետ: Առուսական նախապատերազմյան արդյունաբերության տվյալները ցույց են տալիս մետաղարդյունաբերության թույլ աստիճանը:

Լեռնարդյունաբերությունը կազ-

մում ե ամբողջ արտադր. 11 տոկ. և բանվորների 15 տոկ. Մետաղների հանումը և մշակույթը

կազմում ե ամբողջ արտադր. 16 » » » 18 » Մանածագործությունը կազմում

ե ամբողջ արտադր. 25 » » » 33 » Սննդարդյունաբերությունը կազ-

մում ե ամբողջ արտադր. 30 » » » 16 » Զանազան (քիմիական, թղթի.

փայտ և այլն) 18 » » » 10 » (Բոլոր թվերը վերաբերվում են 1912 թվին):

Մետաղարդյունաբերության պակասը 1912 թվին կազմում եր 24<sup>0/0</sup>: Մանը արդյունաբերությունը տալիս եր խոշորի 1/4 մասը:

Այս բոլորին պետք ե ավելացնել նաև Ռուսաստանի արդյունաբերության կենտրոնացման արագ թափը, ակցիոներական ընկերությունների միջոցով: (Արդյունաբերության կենտրոնացման աստիճանով Ռուսաստանը ավելի առաջ եր քան արդյունաբերական գերմանիան):

Ոտարյերկյա կապիտալը արդյունաբերության մեջ 1908 թվին կազմում եր 1.630 միլ. րուբ., վորից ֆրանսիային ընկնում են 582 միլ. ր., Անգլիային—450 միլ. ր., Գերմանիային—275 միլ. ր., Բելգիային—200 միլ. ր.:

3. Արդյունաբերության վերաշննման յել կառուցման ցըսները:

Արդյունաբերության դրությունը իմպերիալիստական և քաղաքացիական կոփվերի տարիներում մենք լուսաբանել ենք «Բազմական կոմմունիզմ և նեղ» թեմայում:

Նեղին անցնելու պայմաններից մեկն եր արդյունաբերության համար պարենային, հում նյութի և վառելանյութի բազա ստեղծելը: 1921—1926 թվերը կազմում են արդյունաբերության այսպես կոչված վերաշինման շրջանը, յերբ գլխավորապես աճում եր կապիտալի շրջանառու մասը (հում նյութ և բանվորական ուժ): Նախապատերազմյան Ծուսաստանից ժառանգած բոլոր գործարանները և զավոդները սկսում են աշխատել:

1926—27 թվերը հանդիսանում են արդյունաբերության զարգացման մեջ բեկման շրջաններ: Արդյունաբերության հետագա զարգացման համար պահանջվում են միջոցներ հիմնական կապիտալի համար (նոր գործարանների և զավոդների կառուցում, յեղածների լայնացումն, արդյունաբերության մեջ նոր տեխնիկա մտցնել): Այստարիներից սկսվում ե արդյունաբերության կառուցման շրջանը: Այս խնդիրը համեմատած նախկին վերաշինման շրջանի հետ, ավելի բարդ է, քանի վոր նոր գործարանների և զավոդների կառուցումը պահանջում է մեծ միջոցներ, վորոնք պետք ե 4—5 տարով հանեն շրջանառությունից և ապա տան շոշափելի արդյունքներ: Շատ պարզ է, վոր արդյունաբերության զարգացման թափը 26—27 և հետագա տարիներում հետ և միում նախկին տարիների թափը: 1924—25 թվերին արդյունաբերական արտադրության աճումը կազմում է 37<sup>0/0</sup>, 1925—26 թվ.—42<sup>0/0</sup>, 1926—27 թվ.—20<sup>0/0</sup>, իսկ հետագա տարիներում միջին թվով կազմի 10<sup>0/0</sup>. 1927 թվին արդյունաբերությունը տալիս ե 1915 թվի արտադրության 109<sup>0/0</sup>:

#### 4. Արդյունաբերության կազմակերպությունը

Արդյունաբերական շինարարությունը լայնացնելու և ամրացնելու համար, պետք ե այնպիսի կազմակերպություն, վորը ապահովի (ա) արդյունաբերության ծրագրային բնույթը. բ) ստորինողակների (գործարանների և նրանց միավորումների) ինքնուրույնությունը արտադրության և սպորտա աշխատանքներում: Արդյունաբերության ղեկավարման կազմակերպությունը ուղարկան կոմմունիզմի շրջանում ուներ գլավկիզմի ձև, վորը վոչ թե արտադրությունն եր ղեկավարում, այլ ավելի շուտ ճիշտ բաշխում եր յեղող պաշարները:

Նեղի շրջանում զլավկիզմը վերացվում ե և ձեռնարկությունները կազմակերպում են տրեստների ու սինդիկատների մեջ, սա-

կայն ամբողջ ծրագրային դեկավարությունը մնում է Ժ. Տ. Գ. Խորհրդին: Տրեստները միացնում են վորոշ յերկրամասի առանձին ձեռնարկություններ (միատեսակ կամ բազմատեսակ): Ըստ արեստի մեջ մտնող ձեռնարկությունների բնույթի, տրեստները լինում են տեղային կամ համամիութենական նշանակության: Տրեստի մեջ մտնող յուրաքանչյուր ձեռնարկություն կորցնում է իր առեստական ինքնուրույնությունը և աշխատում է տրեստի ցուցմունքներով: Տրեստը աշխատում է ինքնուրույն տնտեսական և առեստական շահավետության հիմունքներով, ըստ վորում արտադրության մեջ արմատական փոփոխությունների խնդիրները համաձայնեցնում է Ժ. Տ. Գ. Խորհրդի հետ: Տրեստների միացումը սինդիկատի մեջ հում նյութ պատրաստելու և արտադրած ապրանքները սպառելու համար հոգարակամ ե, բացի նավթարդյունաբերությունից:

Ամբողջ արդյունաբերության (խոշոր, միջակ և մանր) մեջ 1926—27 թվականին ըստ ընդհանուր արտադրանքի պետական և կոռպերատիվ արդյունաբերությունը կազմում է  $81,9^{\circ}/_0$ : Մնացած  $9^{\circ}/_0$  ընկնում է մասնավոր, նրա թվում և տնային արդյունաբերությանը:

Համայնացրված սեկտորը արդյունաբերության մեջ բնում է դեկավարող տեղը և վարող դերն ե կատարում ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ:

Պետական սեկտորի արդյունաբերական շինարարությունը ընթանում է վորոշ ծրագրով: Բացի տարեկան ծրագրերից կազմվում են հինգամյա հեռանկարային ծրագրեր: Արդյունաբերության մեջ ծրագրային սկզբունքը կազմում է սոցիալիստական շինարարության կազմակերպման միջոցը:

##### 5. Տնտեսական ծրագիրը յև Ելեկտրոֆիկացիան:

Արտադրության մեջ ծրագրման սկզբունքը անցկացրվեց 1921 թվին Ելեկտրոֆիկացիայի ծրագրում: Ելեկտրոֆիկացիայի տակ հասկացվում է տնտեսության այնպիսի բարեփոխությունը, յերբ առավելացույն չափերով ոգտագործվում ե Ելեկտրականությունը: Ելեկտրոֆիկացիայի ծրագիրը նախատեսնում եր 10—15 տարվա շրջանում կառուցել 30 հատ շրջանային խոշոր Ելեկտրոֆիկայաններ 800 միլ. վոսկի ըուբլու ընդհանուր արժեքով և մեկ ու կես միլիոն կիլովատի ույժով: 1921 թվից մինչև 1925 թվականը կառուցված

շրջանային ելեկտրոֆիկայանների ույժը համառմ է 100 հազար կիլովատի, 1926 թվ.—146 հազ. կիլլ., 1926—27 թվին յենթադրված է հասցնել 250 հազ. կիլլ. (բացի տեղային ելեկտրոֆիկայաններից): Ելեկտրոշինարարությունը ըստ տարիների տալիս է հետևյալ պատկերը (1.000 կիլովատներով):

	22 թ.	23 թ.	24 թ.	25 թ.	26 թ.	27 թ.
1. Շրջանային կայանները	10	12	16	62	146	250
2. Քաղաքային	—	—	—	11,5	73,5	—
3. Ցերկաթուղային	—	—	2,5	2,5	2.	3
4. Գյուղատնտես.	0,85	4,66	2,34	6	10	—
5. Արդյունաբեր.	—	—	—	22	93,5	—

Ընդամենը  $10,85$   $16,66$   $20,84$   $104$   $326$   $260$

Հաշվի առնելով Ելեկտրոշինարարության արդյունքները և հետագա աշխատանքի հնարավորությունները կարելի յենթադրել, տապա աշխատանքի հնարավորությունները կարելի յենթադրել, տապա աշխատանքի հնարավորության դժվարությունը կայանում է թվի սկզբին: Ելեկտրոշինարարության դժվարությունը կայանում է կայանների կառուցման թանկության մեջ, վորը բացատրվում է կայանների բառությամբ և աշխատանքների վոչ անանհամեշտ փորձի բացակայությամբ և աշխատանքների վոչ ընդհատությամբ: 1926—27 թվին Ելեկտրոշինարարության համար հնարավորությամբ: 1926—27 թվին Ելեկտրոֆիկացիայի հերթական հատկացված ե 150 միլիոն ըուբլի: Ելեկտրոֆիկացիայի կառուցումն է: Խնդիրը—200 հազ. կիլ. ույժի Դնեպրոստրոյի կառուցումն է:

6. Արդյունաբերական զարգացման հիմնական ցուցանիւերը

1926—27 թվականին յեւ 1927—28 թվականի խնդիրները:

1925—26 թվին ծանր արդյունաբերության արտադրանքի տարեկան աճումը կազմում է՝ աճութիւն— $54^{\circ}/_0$ , մարզանեց— $136^{\circ}/_0$ , տեսական աճութիւն— $71,2^{\circ}/_0$ , պողպատ— $57^{\circ}/_0$ , ցեմենտ  $80^{\circ}/_0$ : Ծանր արդյունաբերությունը 1924—25 թվի իր  $41,3^{\circ}/_0$  տեսակարար կշիռը 1925—26 թվին բարձրացրել է մինչև  $44^{\circ}/_0$ :

Արդյունաբերության ընդհանուր ծրագիրը 1926—27 թվին նախատեսնում է ընդհանուր արտադրանքի ավելացումը  $20,6^{\circ}/_0$  հասկացվում է Ելեկտրոֆիկացիայի ծրագրության միջոցների արտադրությունը (արտադրության միջոցների արտադրությունը բացակայում է 24,9^{\circ}/\_0, իսկ թեթև արդյունաբերակացումը հավասարվելու ընդհանուր աճութիւն— $17,3^{\circ}/_0$ : Այս տարում արդյունաբերության բացակայումը առաջանական մեջ գրվելիք գումարը հավասարվում է 947,2 միլ. ոսւբլի թյան մեջ գրվելիք գումարը

(առանց ելեքտրոֆիկացիայի), վորից 570 միլ. ռ. հատկացվում է ծանր արդյունաբերությանը: Նոր ձեռնարկությունների կառուցմանը բաց ե թողնված 187,7 միլ. ռուբ. 1925—26 թվի 103,1 միլ. ռուբու դիմաց:

Կահավորման ներքին արտադրությունը  $33^0/0$ -ով բարձր է նախապատերազմյանից, ըստ վորում ելեքտրոկահավորումը կազմում  $146,7^0/0$ , գյուղատնտես-կահավորումը  $142^0/0$ : Արդյունաբերական և տրանսպորտի կահավորումը մի քիչ քիչ են:

Չնայած ընդհանուր մեր վերյելքին այս տարում մենք հազիվ հասնենք 1913 թվականի աստիճանին, վորովհետև կահավորման ներմուծումը ներկայումս շատ հետ է մնացել նախապատերազմյանից ելեքտրականությունը գործադրելու համար բաց ե թողնված 160 միլ. ռուբի: Ելեքտրոշինարարության բնագավառում ելեքտրոկայանների ուժը (տեղական, շրջանային, վործարանային) ավելացել է  $122^0/0$ . (1926—27 թվ.—1730 հազ. կիլովատ, 1913 թվի 780 հազ. կիլ. փոխարեն):

Ընթացիք տնտեսական տարվա ծրագիրը նախատեսնում է մշտական բանվորների թվի ավելացում— $7^0/0$ -ով, աշխատավարձի ավելացում— $9,9^0/0$ -ով և մեկ բանվորի միջին արտադրանքի ավելացում— $12,6^0/0$ : Աշխատանքի արտադրողականություն բարձրացումը թելագրում է աշխատավարձի բարձրացման, ինքնարժեքի իջեցման և 400.000 նոր բանվորների ընդունելության հետևանքով, աշխատանքի արտադրողականության ընկնելու հետևանքներից:

«Ծանր արդյունաբերության 3 կարեոր ճյուղերից (նամիտ, ածուխ, մետաղ), կառուցման մեծ նվաճումներ կան նախթարդունաբերության մեջ: 1924—25 թվից մինչև 26—27 թվ. նախթարդյունաբերության մեջ դրված  $420$  միլ. ռուբին գլխավորապես ծախսվել ե արտադրության նոր տեխնիկական վերակառուցմանը, վորը ապահովել է նախթարդյունաբերության համեմատաբար այն բարձր աստիճանը, վորը կա ներկայումս: Ածխարդյունաբերության մեջ դրված  $240$  միլ. ռուբին ևս տվել է անկասկած մեծ վերակառուցման արդյունքներ:

1924—25 թվից մինչև 26—27 թվականը մետաղարդյունաբերության մեջ դրված մոտ  $520$  միլ. ռուբին ամենայն գեպս առավելապես ծախսվել ե վերաշնուրության համար: Գալիք 1927—28 թվին համայնացրված սեկտորում դրվելիք ընդհանուր

գումարը կազմում է հսկայական գումար  $3,350$  միլ. ռուբի, վորը մեկ տարում կը կարողանա նորոգել և լայնացնել հիմնական ֆոնդը  $110^0/0$ -ով: Այս գումարից ժ. Տ. Գ. Խորհրդի կողմից ծրագրվող արդյունաբերությունը ստանալու է 1166 միլ. ռուբ., տրանսպորտը— 483,5 միլ. ռուբի, ելեքտրոշինարարությունը—280 միլ. ռ. բնակչությանին և կոմմունալ շինարարությունը—521 միլ. ռուբի: Կարանային և կոմմունալ շինարարության միջին տարեկան մասշտաբը Շինարարության արժեքի իջեցման միջին տարեկան մասշտաբը նախագծված է  $8—9^0/0$ , իսկ տարվա վերջին  $13—14^0/0$ .

(Կ. Կ. և Կ. Վ. Հ. գումարումը պլենումը նախագծել է  $15^0/0$  իջեցում):

(Կոնտր-цифրք նար. հօշ-վա հա 1927—28 գօդ):

Կ. Կ. և Կ. Վ. Հ. գումարումը միացյալ պլենումը ընդգծեց ընթացիկ տարվա արդյունաբերական գարգացման գլխավոր ցուցանիշները. ա) պետարդյունաբերության աճումը 8 ամսվա ընթացիկ միջին թվով հավասար է  $20—21^0/0$ , արտադրության միջոցքում միջին թվով հավասար է  $29^0/0$  և սպառման մթերքների արների արտադրությունը աճել է  $29^0/0$  և սպառման մթերքների արտադրությունը աճել է  $17,8^0/0$  բ) սկսված են այնպիսի աշխատանքառագրությունը: գ) ներկա ինչպես Դնեպրեցնսկայա յերկաթուղագիծը: ներ ինչպես Դնեպրոստրոյ և Սեմիրեչենսկայա յերկաթուղագիծը: համեցած 9 ամսվա ընթացքում իրական աշխատավարձը, համեմատած անցյալ տարվա հետ ավելացել է  $11,5^0/0$  և միաժամանակ մատած անցյալ տարվա հետ ավելացել է  $11,5^0/0$  և միաժամանակ բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը: դ) գների իրարձրացել է աշխատանքի համամիութենական ինդեքսի ջեցումը ( $9,5^0/0$  ըստ Կ. Վիճակարի համամիութենական ինդեքսի) հատուկ կուլտուրաների ցանքսերի տարածության մեծացումը: ե) հատուկ կուլտուրաների ցանքսերի տարածության մեծացումը:

Սրա հետ միասին ընդգծված են նայե հետևյալ բացերը:

Արա հետ միասին ընդգծված են յուլիթերի թանկում:

կությունը:

գ) Գժվարություններ հում նյութի բնագավառում, իբրև հետևանք հում նյութերի կրածառման անցյալ տարում:

դ) Արդյունաբերական արտադրության ինքնարժեքի իջեցման չափազանց դասդադ թափը:

յե) Յերկաթուղու և տրանսպորտի գարգացման թույլ թափը:

զ) Զգալի գործադրկություն, գլխավորապես վորակյալ և խորա:

առ. աշխատանքի բնագավառում:

Ֆելնելով տնտես-քաղաքական նոր դրությունից մոտակա տն-

տեսական տարվա առաջնակարգ ինդիքս ե բավարար չափով բյուջեատային, վալյուտային, հացի, ապրանքային, հում նյութի և վառելանյութի պաշարներ կուտակելը, վորը անհրաժեշտ ե թե անտեսական շահերի և թե յերկրի ռազմունակությունը ապահովելու համար: Արդյունաշինարական մյուս հերթական ինդիքներից անհրաժեշտ ե մատնանշել՝ ա) կրծատել շինարարության ժամկետները և զգուշորեն սկսել նոր խոշոր շինարարություն, յերբ արդեն կլինեն ազատ միջոցներ. բ) ինքնարժեքի վճռական իջեցումը և նոր կառուցվող ու վերակառուվող գործարանների արտադրանքի վորակի բարձրացումն. գ) մոտակա տարում շենարարության ինդեքսի իջեցումը հասցնել  $15^0/_{\circ}$ -ի, դ) ի նկատի ունենալով, վոր 1926-27 թվականին չի կատարված արդյունաբերական ապրանքների ինքնարժեքի  $5^0/_{\circ}$  իջեցման գիրեկտիվը, այդ գիրեկտիվը իրականացնել 27-28 թվականին: յե) ընթացիկ տարում ապահովել հետամիաց բանվորական խմբերի անվանական աշխատավարձի բարձրացումը և լրացուցիչ միջոցներ գործազրկության դեմ կովելու համար զ) գների քաղաքականության, միամնակ. դյուզ. տնտ. տուրքի ասպարեզում արտօնություններ տալով, լայնացնել տեխնիկական կուլտուրաների ցանքսերը. ե) լայնացնել վառելանյութի արտադրությունը և բնակարանային շինարարությունը. ը) մեծացնել սպասման միջոցների աշխատազրությունը ապրանքային սովոր փախչացնելու համար թ) արդյունաշինարարության ինդիքներում անցկացնել խիստ ծրագիր. ժ) պատրաստել վորակյալ բանվորների անհրաժեշտ կադրեր. ի) պայքարել անտեսական մարմինների բյուրոկրատիզմի դեմ և բարձրացնել զեկավարության վորակը:

Անդրկովկասի արդյունաբերական գարգացումը ոռուսական միասներության պայմաններում, չնայած բնական մեծ հարստություններին լայն թափ չեր կարող ստանալ, Ցարական կառավարության քաղաքականությունը գիտակցորեն կառեցնում եր արդյունաբերության զարգացումը, վորովհետև Անդրկովկասի ինդուստրալիզացիան առաջին հերթին կզրկեր ոռուսական կապիտալիստներին եժան հում նյութից և յերկրորդ կսաხեղներ վտանգավոր կապ արդյունաբերական Անդրկովկասի և Սրենելյան ժողովրդների մեջ: Բացի զրանից արդյունաբերական զարգացմանը խանգարում եր նաև կապիտալների բացակայությունը: Այս պայմաններից յենելով միայն կարելի ե գնահատել Ա. Ֆ. Խ. Հանրապետության արդյունաբերության վերաշնորհան շրջանը և ընդգծել զարգացման հեռանկարները:

7. Ա.Ս.Խ. Հանրապետության արդյունաբերական գարգացման նիմնական ցուցանիւնները յև ներքական խնդիրները:

	Ա. Ս. Ֆ. Խ. Հ. արդյունաբերության վերաշնորհան պրոցեսսի արդյունքները յերկում են հետեւյալ տվյալներից.	1913 թ. 24-25 թ. 25-26 թ. 26-27 թ.		
Քարածուխ	377	413	473	691
	100	109,5	125,5	183,3
	7593	4529	3602	4502
Մարդանեց	100	59,6	47,4	59,3
	10455	753	1175	3275
Պղնձ	100	7,2	11,2	31,3
	30	159	165	206
Աղ	100	534	550	285,7
	507	1040	1950	2079
Սիլիկատ	100	205	484,6	410,1
	9502	3516	5089	6680
Ծխախոտ	100	57	53,6	70,3
	1685	2496	4358	6686
Բամբակի գործվածքներ	100	148,1	258,6	396,7
	1702	492	1270	1945
Մետաքս	100	28,9	74,6	114,3
	1058	1570	2454	2997
Կաշի	100	148,4	231,9	280
	1002	1078	1496	3831
Անտառ	100	107,6	249,1	382,3

(Համարիչը ցույց է արված արտադրանքը 1000 ըուբիներով, հայտարարը  $^{0/_{\circ}}$  հարաբերությունը 1913 թվին):

Այս աղյուսակը ցույց է տալիս թեթև արդյունաբերության գանդաղ թափը (համարագ թափը և ծանր արդյունաբերության ունեցող մարդանեց, պղնձ): Թեթև միութենական նշանակություն ունեցող մարդանեց, պղնձ): Թեթև արդյունաբերության զարգացումը բացատրվում է հում նյութերի արմարակով (բամբակ, մետաքս, կաշի և այլն): Ածխարդյունամեծ քանակով (բամբակ, մետաքս, կաշի և այլն): Ածխարդյունամեծ զարգացմանը հետզետե կթուլանա նախթի տեղական բերության զարգացմանը: Պղնձի և մարդանեցի համար պահանջվում են հիմնական ծախսեր:

Յենգային արդյունաբերության աճման թափը մոտավորապես հավասար է Միության արդյունաբերության զարգացման աստիճանին: Այս թափը քիչ է, քանի զոր նա Անդրկովկասը թողնում է տնտեսապես հետամնաց զրության մեջ: Ա. Ս. Ֆ. Խ. Հ., արդյունաբերության համայնացված սեկտորի մասը (առանց Ազնեֆթի) 26-27 թվին կազմում եր 93%, մասնավորինը — 7%, Ազնեֆթի հետ միասին համայնացրված մասը — 97%, մասնավորինը — 3%: Արագորեն զարգանում է Ժ. Տ. Գ. Խորհրդի արդյունաբերությունը: Աճման թափը յերկում է հետեւյալ աղյուսակից (0% հարաբերությունը՝ նը անցյալ տարվա հետ համեմատած):

	25—26 թվ.	26—27 թվ.
Ժ. Տ. Գ. Խ. Ս. Մայցյալ:	Ժ. Տ. Գ. Խ. Ս. Մայցյալ:	Ժ. Տ. Գ. Խ. Ս. Մայցյալ:
Ազրբեջան	177	122
Հայաստան	143	135
Վրաստան	151	144
Ա. Խ. Ֆ. Ս. Հ.	162	131
		145
		125

Աշխատանքի արտադրողականությունը հետ չի մնում համամիութենական չափերից:

1 բանվորի արտադրությունը 1 տարում:

	Խ. Ս. Հ. Մ-ում	Ա. Խ. Ֆ. Ս-ում	24—25 թվ. 25—26 թվ.	24—25 թվ. 25—26 թվ.
Ածխարդունաբերություն	1123	1278	755	839
Մանածագործվածքային	3545	3660	3172	3532
Բրդիարդյունաբերություն	4430	4535	2415	4442
Կաշվի-արդյունաբ:	6091	7056	5261	8156

